Արձանագրություն h. 4

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 22. 06.17 թ. կայացած նիստի:
Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 26-ը:

Օրակարգում՝

1. Պրոֆեսորա-դասախոսական պաշտոնների տեղակալման մրցույթ:
2. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Հ.Մնացականյանը: Նա ներկայացրեց տարբեր ամբիոններից մրցույթի մասնակիցների անձնական տվյալները և ասաց, որ մրցութային հանձնաժողովը երաշխավորում է մրցույթի վեց մասնակիցներին էլ մասնակցելու գիտխորհրդի քննարկմանը:

Որոշեցին Վ.Աբրահամյանին, Ա.Գալստյանին Վ.Գաբրիելյանին, Հ.Մարգարյանին, Ա.Մկրտչյանին և Վ.Մարուխյանին թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Մ.Միքայելյան /նախագահ/, Հ.Զաքոյան, Ռ.Ալավերդյան,

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քվեարկության արդյունքների վերաբերյալ: Դրանք հետևյալն են. քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից նիստին ներկա գտնվող 26-ը, բոլոր թեկնածուներին կողմ են քվեարկել 26-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա:

Որոշեցին հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

Որոշեցին նկատի ունենալով քվեարկության արդյունքները, ամբիոնների և մրցութային հանձնաժողովի որոշումները, ներքոհիշյալներին ընտրված համարել նշված պաշտոններում.

Վահրամ Գևորգի Աբրահամյանին՝ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր

Գալստյան Անի Նորիկի ՝ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ

Գաբրիելյան Վարդուհի Գևորգի՝ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս

Մարգարյան Հասմիկ Գառնիկի՝ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ

Մարուխյան Վեհանուշ Սամվելի՝ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ

Մկրտչյան Աննա Ֆահրադի՝ կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ:

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ.Սարգսյան

Ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ.Համբարձումյան